

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլիարիոյ համար

Տարեկան Ֆրք. 10


Վեցամսեայ " 5

Արտասահման

Տարեկան Ֆրք. 12

Վեցամսեայ " 6

ԿԱՆԽԻԿ



Գրութիւնք ետ չեն տրուիր:

Հասցէ

DIRAN PAPAZIAN

RUE DRAGOMAN

K. STEPAN

(BULGARIE) VARNA

ՇԱԲԱԹԱՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵԾՏԱԿԱՆ

Երէ կ'ուզե՛ք «Հայեղի»ին մէջ աղբոր երեւնալ,

Պատրիք սիրուն եւ ազնիւ դեմք մը ունենալ:

ԱԶԳԱՅԻՆ

(ԱՅՍՕՐՈՒԱՆ ԹՂԹԱԲԵՐ)

Նպաստից Յանձնաժողովը որոշեց տիպար—արհեստանոց մը հաստատել Ազգ. Հիւանդանոցին մէջ, նկատելով որ մաս մը որբեր վարժարանական եռամեայ շրջանը աւարտելու մտա են: Այս մտօք հրահանգ տրուաւ գաւառաց անաջնորդներուն և որբանոցներու խնամակալութեանց ալ:

—Ա.Ե. Հայրապետը գիր մը յրկած է Պատրիարքարան, որով Ախալքալաքի աղետալի երկրաշարժին անթիւ տեղացիներուն թըշուառ վիճակը կը նկարագրէ և կերպով մը այլևս այն կողմէն Որբանոց մը գործին համար նպաստ զրկուելուն հնարաւոր չըլլալը ցաւ ի սիրտ կը յայտնէ:

Ն. Ս. Օժութիւնը յատուկ կոնգակաւ մը հրահարեր է Ռուսաստանի կարող ազգայինները, նպաստ հասցնել Թիֆլիզի և շըրջականներու երկրաւարժէն արկածեալներուն:

—Հաճընի գայմագամ Իսկէնտէր պէյ, Ս. Յակոբայ տօնին օրը բաղբին Ազգ. Որբանոցին գտնուած վանքը քացեր ու բանաստեղծեամբ մը որբերը բաջալերելէ ետքը,

անձամբ պնակ պտտուցերէ, նախ և առաջ գումար մըն ալ ինք նուիրելով:

—Ս. Պատրիարքը իր 5—6 ամսաթոշակները 300 լիրայի չափ, նուիրեր է ի նպաստ որբոց և կարօտելոց:

Սոյն նպատակաւ Պոլսոյ ազգայնոց մէջ կատարուած հանգանակութեան արդիւնքն ալ մինչև յունուար 8 եղած է 555 ոսկի:

—Աթէնքի հայերը աղբրագիր մը տալով հելլէն կառավարութեան, ինդրեր են Յունաստանի մայրաքաղաքին մէջ գետին մը յատկացնել իրենց եկեղեցի մը կառուցանելու համար:

—Երևանի բնակիչներէն մահտեսի Միքայել Շամիլեանց, հետևեալ կտակը ըրեր է. 400 ռուբլի Սեփաստիոյ որբանոցին, 200 ռուբլի Երևանի թեմական վարժարանին, 100 ռուբլի Երևանի կիսաշէն եկեղեցւոյն, 600 ռուբլի որբ աղջկան մը և 50 ռուբլի աղբատներուն:

—«Արևելեան մամուլ»ի մէջ կը կարդանք թէ Իզմիրի երկսեռ որբանոցներուն մէջ կազմուած և Ծնունդի անթիւ գարոցական հանգէսներ կատարուեր են: Վիճակին Առաջնորդ Տ. Մելքիսեպէկ Սրբազան անձամբ նախագիր է երկսեռ որբանոցներու տօնական

ծառերուն : Աղջկանց որբանոցը բերուեր են Ներսէսեանի որբերը , ընտանեկան համախմբում մը , ուր քոյր և եղբայր ուրախ զըլարթ , միրգերով , անուշեղէններով և այլ և այլ նուէրներով խնդացեր ու բերկրացեր են : Գթասէր ընտանիքներ ճոխ նուէրներով փութացեր են զարգարել տօնածառը և որբ ու որբուհի Առաջնորդին ձեռքէն ստացեր են վեցական թաշկինակ , զորս ինչպէս ամին տարի , Օր . Կ . Արապեան իր իսկ ձեռքով կարած ու պատրաստած է եղեր : Հոգատար որբախնամը ուրիշ հրճուանք մը ևս ունեցեր է այդ օրը , Տ . Սահակ Եպիսկոպոս Խապայեան՝ որբ մը պահելու որոշումը գործադրեր է , նոյն որբանոցէն որբուհի մը որդեգրելով կազանդի օրէն սկսեալ :

— Պատրիարքարանի և Տիգրան փաշայի միջև կատարուած բանակցութիւններէն կը հաստատուի Եգիպտացի Թագաւոր փաշայի կրտսակին գոյութիւնը , որ կը տրամադրէ Իդմիրի մէջ աղջկանց վարժարան մը հիմնել : Հանգուցեալ փաշային վաղամեռիկ աղջկան յիշատակին համար : Կտակարարը իր որդւոյն՝ Լեւոն պէյի յանձնած է , արբուն հասակը թեւակոխելէն ետքը հիմնել այս վարժարանն որուն համար չորս հազար լիւրայի արժէթուղթ դրուած է գերմանական դրամատուն մը և որ շահերով բազմապատկուած է այժմ : Կտակին գործադիրը թեւակոխած է այսօր չափահասութեան տարիքը և կտակակոտար Տիգրան փաշա Ապրօ յայտարարած է թէ Լեւոն պէյի կը մնայ գործադրել կտակը :

Արդ , որովտեսեւ Իզմիրի վիճակն է կտակընկալը , տեղոյն առաջնորդ Սրբազանին հարկ եղած զեկուցումը եղած է Պատրիարքարանի կողմէ , սրպէս զի ինքն ալ իր կողմէ հետապնդէ կտակին գործադրութեանը :

— Ֆիլիպէի մէջ կազմուած Վասպուրականի որբախնամ ընկերութեան գործադիր մարմինները հետեւեալ անձնաւորութիւններէ կը բաղկանան :

- Ատենապետ Պետրոս Գաղաղեան
- Ատենադպիր Կարապետ Թէզէքճեան
- Գանձապետ Ոսկան Նալչաճեան
- Երեք պատուակալ անդամ
- Տիկնայք Կիւլինիայ Պ . Աթարճեան
- " Եղիսաբէթ Մ . Թովմասեան
- " Մարիամ Մկրտիչ Աթարճեան

- " Եղիսաբէթ Յ . Ազամեան
- " Բարանձեմ Թ . Խորիկեան
- " Մաննիկ Խ . Թագաւորեան
- Օրիորդք Լուսաբեր Մթէոսեան
- " Մաննիկ Մկրտիչեան
- " Ազնիւ Սահակեան

Ն Ա Մ Ա Կ Խ Մ Բ Ա Գ Բ Ո Ւ Ի Ի Ե Ա Ն

... Խմբագիր .

Քանի մը օր առաջ տեղական թերթերու միջոցաւ հրապարկ ելած վիճակահանութեան խնդիրը կարողանալով լուսաբանել կը փութանք ձեռք տեղեկացնել : Այդ վիճակահանութեան թուղթը հրապարակ նետող Պ . Օ . Գ . որ կուղէր հաւատացունել թէ թրքական վերջին վայրագութեններուն զոհ դացոյ Տիկին մը կայ : Արդ , ստոյգ աղբււրէ կը տեղեկանանք թէ այդ տիկինը ոչ թէ վընասուած այլ նիւթական գոհացուցիչ վիճակի մը մէջ կը գտնուի , եւ աւելի առաջ երթալով պիտի կրնամ ըսել թէ նոյն իսկինքը կարող է իսկական զոհերուն նիւթապէս ալ օգնել :

Այս խաբեբայութիւններու առաջինը չէ : միայն ցաւալին այն է որ այս անգամ տիկին մալ մեղսակից կըլլայ այս խաբեբայութեան , Տիկինը թող չը կարծէ թէ 20. 25 ֆրանք արժող ձեռագործը 100. 125 ֆրանքի վիճակահանութեանը կրնայ միամիտ ժողովուրդը խաբել : Իր սեռին պատիւ չը բերող այս տիկինը թող գոհ մնայ որ կը խնայենք այս անգամ իր անունը չը հրապարակելով . միայն խորհուրդ կուտանք որ ուրիշներուն հացը չխլելու համար նոր մեքենայ մալ բերելտալու չափ անխիղճ չըլլայ :

Իսկ Պ . Օ . Գ . ն ալ՝ գոյանալիք դրամին կէսը կաղմակերպուած մարմնոյ մը յատկացնելու խոստումով . (որուն արդէն ջերմ պաշտպանը և միանգամայն օժանդակողն է հրապարակէն հաւաքուած

այնքան դրամներուն կորսուելուն) թե-
րեւս ստանձնած ըլլայ այս վիճակահա-
նութեան ձեռնարկելու գործը :

Այրի տիկին Մարիամ Մինասեան
19 Յունվ. 1900

Վառնա

Յ. Գ. Ներկայէս մէկ մէկ օրինակ ալ
դրկուած են իրաւունք եւ Շարժում թեր-
թերուն :

ՏԳԵՂ ԲԱՐՔԵՐ

« Հինգշաբթի իրիկուն վէտէլօ Հայ դե-
րասանական խմբին տուած ներկայացմանը
ներկայ գտնուեցանք, Սրահը հանդիսական-
ներով լի էր և խաղն ալ բաւական յաջող .
սակայն մենք չկրցինք մինչև վերջը հետևել
թատերախաղին, որովհետև նոյն միջոցին՝
ուրիշներուն պէս մեր ալ ուշադրութիւնը
գրաւած էին զարգացեալ դասակարգէն եր-
կու քոյր օրիորդներ, ազգաւ հայ, որոնք,
մեզմէ մէկ—երկու կարգ առաջ նստած,
պատշաճից օրինաց հակառակ այնպիսի ան-
վայել ընթացքներու մէջ գտնուեցան, որ թէ՛
իրենց և թէ՛ ազգակիցներուն պատիւ չի բե-
րելէ պատ, ներկայից արդար գայրոյթը ի-
րենց վրայ հրաւիրեցին :

Այդ օրիորդները պէտք է գիտնան որ
իրենց այն արարքը շանքաւնհրու մէջ կըր-
նան տեղի ունենալ ու ոչ թէ՛ թատրոնի սը-
րահին, ուր կը համախմբուի միշտ պատուա-
ւոր բազմութիւն մը :

Այս անգամ խնայելով իրենց անունը
հրապարակել, յուղղութիւն և զգաստութիւն
կը հրաւիրենք դիրենք :

22 Յունվ. 1900 ԹԻԻ 25 ԱԹՈՒ
Վառնա

ԹԱԳՈՒՀԵԱՅ ԹԱԳՈՒՀԻՈՅՆ
ԸՆՏՏՈՒԹԻՒՆԸ

Բարից 13 | 25 Յունուար

Բարեկենդանը մօտենալու վրայ է, և
արդէն պատրաստութիւններ կը տեսնուին այդ

տօնը ուրախութեամբ անցունելու : Գիտէք թէ
բարեկենդանի առթիւ թափոր մը և ձիարշաւ
մը տեղի կունենայ ի Բարիչ, որուն կը մաս-
նակցին լուսցարարութիւնը, ուսանողները ևն.
Մէն մի լուսցատուն իր գործաւորութիւններէն
քազունի մը կընտրէ և այդ բոլոր թագու-
հիւներուն մէջէն ալ քազունեաց քազունին
կընտրեն, այսինքն թագուհիներու մէջէն ա-
մենագեղեցիկը :

Արդ, երէկ իրիկուն տեղի ունեցաւ
թագուհեաց թագուհեայն ընտրութիւնը, գի-
նեվածառի մը խանութին մէջ : Բազմաթիւ
օրիորդներ հագուած սգուած ու ազւորացած
այդ նեղ խանութին մէջ խանուեր էին, սըր-
տերնին յոյսէ, ուրախութենէ և յուսախա-
բութենէ բաբախելով :

Աղջիկները ժողվուած են նախագահին
(տօնի նախագահին) բոլորտիքը, որուն առջև
աւշադրանքի խոշոր ամանի մը մէջ շրտնջ պատ-
րաստուած է, եւ որուն հիմա կրակ պիտի
տան եփելու համար, երբ ընտրելու հար-
անունը հռչակուի :

Վերջապէս նախագահը բարձր ձայնով
կարտասանէ օրիորդ Գլոթիլա Օլուֆի անու-
նը որ 14 բուէով քազունեաց քազունի
ընտրուեր է, մինչ իւր հակառակորդը՝ Ալ-
պերմին Տիւրլօ միայն 4 բուէ ստացած է :
Ուրեմն այս վերջինը պատշաճ օրիորդը պիտի
ըլլայ առաջնոյն՝ ուրիշ մէկ բանիներու հետ :
Ընտրուողը 19 տարեկան կլորիկ, թոմպուլիկ
ու խարտեաչ աղջիկ մըն է սեւ աչքերով :

Այս տարի թագուհեաց թագուհին պի-
տի ներկայացնէ 1900ի Յուլիանականը. իր
պատուոյ օրիորդները պիտի ներկայացնեն վա-
ճառականութիւնը, ուսանողութիւնը, արու-
եստները ու երկրագործութիւնը : Իսկ տօնի
թագաւորները պիտի ներկայացնեն Մարսը
եւ Նէպտիւնը :

Սէսի եւ Մ. Գաւիթ Բէկի



ՉԻ ԼԻՆԻՐ



Չէ՛, չի՛ լինիր, անուսում՝ անձ կատարեալ
 մարդ չի՛ լինիր,
 Մի բանի բան ուսանելով՝ ուսումնական չի՛
 լինիր :
 Լայն ըզգեստով, թանկ շորերով դիւանա-
 գէտ չի՛ լինիր,
 Ո՛չ մօրուքով, ո՛չ ակնոցով գիտուն ըսուիլ
 չի՛ լինիր :
 Անազնիւ հօր որդին հօգևով մարմնով ազ-
 նիւ չի՛ լինիր,
 Առանց ցեղի, առանց ուսման ազնուական
 չի՛ լինիր :
 Հայրե՛ր, զաւակ չի կրթուած վայելուչ
 մարդ չի՛ լինիր,
 Հիւանդ մարդու որդին առողջ՝ երկայնա-
 կեաց չի՛ լինիր :
 Ո՛չ, անպարկեշտ երիտասարդ՝ ութսուն-
 ամեայ չի՛ լինիր,
 Անբարեխառն երես՝ կարմիր, աչքեր փայ-
 լուն չի՛ լինիր :
 Եւ հիմնապէս շուսած աղջիկ, ո՛չ, ընտիր
 մայր չի՛ լինիր,
 Արև չտեսած ծառ, բոյս, ծաղկին ինչպէս
 հոտ, գոյն չի՛ լինիր :
 Գայեակի կաթ հարապատ մօր կաթի պէս
 քաղցր չի՛ լինիր,
 Տըղի համար մօր գրկաց պէս հանգիստ մի
 տեղ չի՛ լինիր :
 Արմատացած ծուռ համոզում նորէն փոխել
 չի՛ լինիր,
 Ինչպէս կ'ըսեն՝ հաստատած ճիւղ ուղղել,
 թեքել չի՛ լինիր :
 Երկու ծաղկով, մէկ կանաչով երբէք գա-
 րուն չի՛ լինիր,
 Անդաստանին անձրեւ պէտք է, ցօղով ջըր-
 ուիլ չի՛ լինիր :
 Առանց արտը սերմ ցաննելու, պրտուղ յու-
 սալ չի՛ լինիր,
 Օտար աչքով լոյս, գործ տեսնել հաւա-
 տացէ՛ք չի՛ լինիր :

Ինչպէս այլոց խնամոց թողուած գործ կա-
 տարեալ չի՛ լինիր,
 Տըգեղ ագուա կարմիր վարդին ջերմ սի-
 բերգակ չի՛ լինիր :
 Տըխուր բուռն ախորժիկի երգ ըսպասել չի՛
 լինիր,
 Կատղած ծովուն աղաչելէն գուժ և օգուտ
 չի՛ լինիր,
 Եւ անպատիւ ընկերներէ բարիք յուսալ
 չի՛ լինիր :
 Ս. Գ.



ԲԺԻՇԿԻ ՄԸ ԳԼՈՒՆ ԵԿԱՆՔ ՓՈՐՁԱՆՔԸ

Անցեալները հայաշատ քաղաքի մը
 մէջ գալթական եւ թանաթուննոց հիւանդ
 կին մը գարմանելու կը հրաւիրուի հայ
 բժիշկ մը: Սա հաղիւ թէ ստքը սենեա-
 կէն ներս կը դնէ, ահա պառաւը կը
 սկսի պոռալ.
 — Ախ, պօյըդ սիրեմ՝ եալլում, տէրախ տէրման մը, ալեուդ մեռնիմ տօքթոռ:
 — Ի՛նչ ունիս մարիկ, ո՛ւր տեղդ կը ցաւի :
 — Ախ, ո՛ւր տեղս խուռատա չէ քի, ամա իլլէ սօլ կուշտ սօլ կուշտ, էյ արթըզ գարուլարը գարսոյր :
 — Ո՛րչափ ատեն է որ այդ...
 — Հին պան է օրդտի տէ՛յ առ- ջինեկովս, արութաքիյովս սէպէպլի էի նէ՛ ան ատենէն մնայած է, չիւնքի բէք նահանջ եղաւ, ամա աս հիմակուանը ծնունտին պարկեքնէն պէրի է, անանկ չէ՞ քա հոռօր :
 — Այո՛ մարիկ :
 — Անկէց եալլում, սա խալչայիս

կլոխը, ան կիտես քի պիզերը մզրախ-
ները առեր կը փորեն կոր. բուն ըս-
ուած բանը աչքս չի մտնար կոր. աս-
տար իլաճ, աստար մէհլէմ, էյվայ կըլ-
խուգ կտոր մը ֆարխ ըրէ, ինչ կըլլայ.
հա մուցայ, էրեսգ ամպէրներ՝ եէսլի
եախը ալ պացի ամա՛ նաֆիլէ: Ան հէլէ
կլոխս ըսես նէ՛ մէջը պալեօղ կը խա-
ղան կոր. փորս ալ քէսմէ խտեա կըր-
երէ, պարէ շիշէ մըն ալ վարնոց չի
խմեմ:

— Վարնոցը ի՞նչ է:

— Վարնոց չէ՞ր քա Հոռոփ, աղբո-
րը պերածը:

— Չէ՛ մարիկ, եանօս էր:

— Էյ իշթէ ինչ է նէ. հառամ ըլ-
լայ առած փարան, պարէ մէկ բանիս
ֆայտա՞ ընէ: Սա ծունկերուս ալ ճար
մը կուզեմ, դուզում եալրում, ան կի-
տես քի բրանկալը եմ տէ՛ քէլէբճէները
զարկեր են. անկէց սօղրոս . . .

— Էյ քիչ մը սօլուխ առ մարիկ:

— Հա, սօլուխ ըսիր տէ աղէկ միտ-
քըս ինկաւ, սա նէֆէս առած տուած
վախթրա՛ պիւթիւն ոիրտիս տէօչէմէ-
ները կը ցաւին, սա ալ իշթէ մի մոռ-
նար: Քա տահա ինչ ունէի, Հոռոփ, ըսէ,
իմ զէյնս տաղընըխ է:

— Մէջքիս օրթատեղը կը ցաւի
կոր ըսիր:

— Հա թամամ, ամա գիտեմ կոր
քի միտքս բան մը կայ. հէլպէթտէ ա-
նոր ալ ճար մը պիտի ընէ:

Բժիշկը տեսնելով որ այս պատմու-
թեան վերջը չպիտի դայ, և թէ զա-
ռամեալ ծերուկը արգէն մարագ քօր-
պասի մը ըլլալով, մերձ է առ դուռն
գերեզմանին, կը սկսի հիւանդին կըր-
նակը, կուրծքը և ուռեցած ստքերը
զննել. ու երբ ձեռքերը լուարու համար
դուրսի սրահը կելնէ, պառաւը իր աղ-
ջիկանը կըսէ.

— Քա Հոռոփ, մենք սս մարդուն
փարայ պիտի տանք, հայտէ դուն ալ
ինքզինքդ ցուցուր:

— Աղէկ ըսիր մարիկ, ամա կայնէ
պաշխա բան մըն ալ ընենք, հաղըր հոս
եկած է, դուռ դրացի ինչտար հիւանդ
կայ նէ խապար կընենք թող գան, զա-
վալլըները կարողութիւն չունին մախ-
սուս հէքիմ բերելու, ամա հոս գան մէյ-
մէկ ֆրանք տան նէ՛ կը լմնայ կեր-
թայ, սս աղէկ հէքիմ մըն է. հար-
եաթ ալ չի նայիր քի ոտքը երթան.
մենք ալ սէվապ մը ըրած կըլլանք:

— Աճապա կըլլայ՝ կըսես:

— Ինչո՞ւ չըլլար, հիմա ներս դա-
լուն պէս խահուէ մը կուտանք, դուն
քիչ մը ալընտր-միշ կընես, ես կերթամ
անոնք կը կանչեմ:

— Անանկ է նէ Մարինոսին տագ-
րոջն ալ խապար զրկէ, զավալլըին պա-
ղըրսախները եէլէնմիշ կըլլան եղեր տէ՛
ինչ ընենին չիյտեն կոր, քովի կօբօ-
իցա Մառիքաին ալ խապար տուր:

Չերկարենք, պառաւին իշկիպար
ողջիկը շատ չանցած՝ ցաւազարներու
չանակի մը գլուխն անցած սենեակէն
ներս կը խուժէ, այն պահուն՝ երբ բը-
ժիշկը դեղագիրը գրելով մեկնելու վը-
րայ էր:

Պառաւը — Գուզում տօքթօռ, սա
աղջիկ թոռանս ալ մէյ մը նայէիր, է-
րեսը պէնզ չի կայ, տէ վիրա ան եու-
մուրճախ պօեան կը քսուի:

Կին մը, որ գիրկը մանուկ մը ու-
նէր. — Արեուդ մեռնիմ աղբարիկս,
չօճուխս ծառքէ կելլայ կոր, մէյ մը
ծառք վրան դիր:

Ուրիշ մը — Անուշիկ մեռելիդ հո-
գուն ըլլայ, մէյ՞մը սա կուշտո նայէիր:

Խեղճ բժիշկը շուարած կը հարցնէ.
— Ճանըմ, դուք զիս հիւանդի տուն
հրաւիրեցիք թէ ոչ հիւանդանոց:

Պառաւը — Վույ ճանըմ տօքթօր,
ատ ինչ խօսքէ. հէմ գիտցած ըլլա՞ր քի
անկարեա ալ չէ. օլտուգ ճա մարդու զա-
ւակ են. մարդութիւննին պիտի ընեն

Պառաւին այս խօսքերուն վրայ բո-
լոր ախտացեալք միաբերան կը գոչեն.

— Աստուած կէնծութիւնդ պահէ
սօքթօր, մենք ալ սանքի պիտպիւթին
հայվան չենք. պարտքերնիս կը ճանչ-
նանք:

Բժիշկը համոզուելով որ այս փոր-
ձանքէն ազատելու համար կամքերնին
կատարելէ սերիչ ճար չէր մնացած, մէյ
մէկ դեղագիր յանձնելէ ետքը ինքզին-
քը փոյոց կը նետէ: Նոյն միջոցին պա-
ռաւը ներսէն կը գոչէր.

— Տօքթօր, խըամէթ ըլլայնէ մէյ-
մըն աչ ե՞րբ պիտի գաս:

Բժիշկը — Հանգիտ ըրէ խաթուն,
քանի մը օրէն ալ պէտք չես ունենար
բժիշկի:

ՔԼԻԹ

Ե Ե Մ Ե Ք Լ Ի Ս Թ Ա Ս Ը

(Թարափըմըզա կէօնտէրիլէն այնէն
վարագա տըր).

... Մուհարրիբ,

Պէնտէնիզ պու եագընլարտա պիր
լօղանթա քիւշատ իտէճէկիմտէն, բա-
յէթլիւ միւշթէրիլի ճէլպ իթմէք իշիւն,
աթիտէ մուհարրէր նէֆիս եէմէքլէրին
լիսթասընը միւթէպէր կաղէթանըզտա
պիր տէֆաճըզ նէշր օլունմասընը մի-
նասիպ կէօրմիւշիմ տիր: Պունա մու-
գապիլ, պիր կիւն Պարոն Բոժոժիկ լօ-
գանթամըզա թէշրիֆ պույուրուպ
ազգայիմնէ գարնընը սոյուրապիլէճէք
տիր:

Աջը հաճի կուռնելիս

Լ Ի Ս Թ Ա

Արմէնիա չօրպասը, Օժանդակ բի-
րինճի իլէ.

Շարժում աօրմաը, Թղթակցու-
թիւնլար ըլա.

Իրաւունք թիւրլիւ պաստըպը, էր-
մէնիճէ իլէ թիւրքճէ գարըշըգ:
Թէրպիլյէլի քէօֆթէ, ալա Լառմէնի:
Մարտ մանթարը բլաքիսի:
Դրօշակ գարուսկասը, Գըրմըզը պի-
պէս իլէ:

Հայրենիք՝ բէրուշան քէպապը:
Սօղուգ սէօյիւշ, ալա Հնչակ:
Չօպան քէպապը, ալա Անահիտ,
Նոր կեանք պայըլտըը, բամպուգ
եաղըլա:

Ձայն հայրենեաց էքշիլիսի:
Փիւնիկ գարամասը, Մըսըր ողա-
նըլա:



Միութիւն գօմբօսթօսու, Աթինա
բէքմէզիլյէ:

Արշալոյս բուֆ պէօրէի, Մըսըրըն
գամըշ շէքէրիլյէ:

Հայելի գահվէսի, կէրէք սատէ կէ-
րէք թաթլը, ալա քէյֆի

ԿՈՒՌՆԵԼԻՈՍ

Ն Կ Ա Ր Հ Ա Ն ՈՒ Կ



Առաջին անխալ կարդացողին նուէրն
է կատակերգութիւն մը:

Թիւ 145 «Հայելի»ի նկարհանուկը
կարդալ այսպէս.

«Պարկեշտ կինը էրկանը փառքն ու պա-
տիւն է»:

11 նամակպիրներէ 4ը անխալ կարդա-
ցեր էին հետեւեալ կարգաւ. Տ. Վահան Հաւ-
նունի (*), Շուվայէն. Գ. Կիւլպէսերեան Վառ-
նայէն. Ն. Համբերեան Սօֆիանէն և Գեորգ
Համբարձումեան Սիւսպրէէն:

(*) Հաճեցէք հասցենիդ իմացնել որ նուէ-
րը ղրկենք:

Մ Ո Ւ Է Ռ

ԲՈՒՆԻ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ



Ծեր .— Աս բաժ աղջիկս շատ սիրուն է, եւ բոլոր սրտովս կը սիրեմ զինքը :

Գեր .— Իրա՞ն, սրտանց կը սիրե՞ս :

Ծեր .— Այո, հօրմէն ալ ձեռքը ուզեցի :

Գեր .— Ուզեցիր մի :

Ծեր .— Հա՛պա, և աս գիշեր ալ պիտի պսակուիմ, լմնցունեմ :

Գեր .— Էյ անանկ է նէ՛ կարգուէ, ալ բսելիք չունիմ :

Ծեր .— Ի՛նչ, մաքիս դրածը ե՛տ պիտի առնէի պարոն Գերոնիմոս, դուն կը կարծես որ ես բաւական կոկիկ մարդ չեմ կնիկ մ'առնելու համար, տարիքէն ի՛նչ կելլայ եղեր, մենք գործը նայինք . . . ունիս մի երեսուն տարու մարդ մը որ ի՛նքի պէս կայտառ և ուժով ըլլայ, նայէ՛ ակռաներուս ամենն ալ տեղն են, (ակռաները ցուցնէ) օրը չորս անդամ կերակուր կուտեմ և շատ աղէկ ալ կը մարսեմ, հէ՛մ, հէ՛մ, հէ՛, (կը հապայ) ասոր բսելիք ունի՞ս մի :

Գեր .— Իրաւունք ունիս սխալեր եմ եղեր. շատ աղէկ կընես թէ որ կարգուիս :

Ծեր .— Ո՛ր թողունք որ, սիրուն և գեղեցիկ կնիկ մը պիտի ունենամ, որ ինձի շոյէ, փայփայէ, հազար գգուանք պիտի ընէ ու ամեն հոգ պիտի ունենայ վրաս : Ասկէ զատ՝ կը մտածեմ որ եթէ չկարգուիմ, Ծերունեան գերդաստանը պիտի ոչնչանայ . իսկ ընդհակառակը կարգուելու որ ըլլամ, ինձի պէսեր պիտի ելլան ինէ, որ երկու շուրի կաթիլ իրարու ինտոր կը նմանին նէ՛ անոնք ալ անանկ ինձի նմանին : Տանս մէջ պիտի վազեն վազվազտեն, պոռան պոռչան, իրիկունները շուկայէն դարձած ատենս ինձի հայրիկ պիտի կանչեն, հազարումէկ խենդուխելաւ բաներ պիտի ըսեն ինձի : Կարծես թէ արդէն կարգուեր եմ եւ կէս սուզինա ալ զաւակներ չորս կողմս շարուեր են . ո՛հ ի՛նչ ուրախութիւն :

Գեր .— Ասկէ աւելի աղէկ բան չը կայ, նայէ որ ժամ մը առաջ կարգուիս :
Ծեր .— Բարեմտութեամբ կը զրուցես կոր :

Գեր .— Անտարակոյս, աղէկ աւելի աղէկ բան չես կրնար ընել :

Ծեր .— Ճշմարիտը, շատ ուրախ եմ, որ բարեկամաբար աղ խորհուրդը տըւիր ինձի :

Գեր .— Սղէկ ա՛, առնելիքդ ո՛վ է :

Ծեր .— Տօրիճան :

Գեր .— Վա՛յ, այն գեղեցիկ, այն աննրման Տօրիճան, Անդիմօտին աղջիկը :

Ծեր .— Ճիշդ, գլխուն զարկիր :

Գեր .— Սա կոմիտաս է ի՛նչ է, անոր քոյրը :

Ծեր .— Այո՛, ան, էյ ի՛նչ կըսես :

Գեր .— Շիտակը աղէկ կտոր է, Աստուած կատարին հասցունէ :

Ծեր .— Էյ հրամանքդ ալ հարսնիք պիտի հրամանես ա՛ :

Գեր .— Իլխուս վրայ ամենայն սիրով :

Ծեր .— Ծառայ եմ :

Գեր .— Ծառայ բարձրելոյն . (մեկուսի) Տօրիճա՛ն. պարոն Անդիմօտին այն գեղեցիկ աղջիկը, սա խռփած Ծերունին, սա 56 տարու մարդուն հետ պիտի կարգուի հէ՛. հա՛, հա՛, հա՛, հա՛. աս ինչ հարսնիք, աս ի՛նչ հարկինք :

(Կրկնելով կերթայ)

Ծեր .— (Մինակ) Սա ամուսնութիւնս պէշ պիտի չըլլայ որովհետեւ ամենուն ուրախութեանը պատճառ եղաւ, և ըստողը կը խնդայ կոր . ասկէ աւելի փառք չկրնար ըլլալ ինձի համար :

ՏԵՍԻՒԼ Բ .

Տօրիճա և Ծերուն

Տօրի .— (Պգտիկ տղայ մը ետին ձգած՝ տեսարան կը մտնէ) Հագուստս վեր բռնէ որ գետինը չը քսուի :

Ծեր .— (Հեռուէն Տօրիճան տեսնելով) Ահա իմ նօնօշս կուգայ կոր, ատէք, ի՛նչ գեղեցիկ է, ի՛նչ հասակ, ի՛նչ շարժուածք, մարդ ասանկ աղջիկ մը տեսնելէն ետքը ինտոր չը կարգուի : (Տօրիճային) Ո՛ր կերթաս կոր բամբիշ, քու փեսացուիդ հարսնցուն :

Տօրի — Քանի մը բան պիտի գնեմ:
Ծեր — Ահա սիրելիս, եկաւ ժամանակը որ մենք իրարմով երջանիկ պիտի ըլլանք. կարծեմ թէ բոլորովին գոհ պիտի ըլլաս ինէ, ալ ասկէ ետքը գըլխէդ մինչև ոտքդ իմինս պիտի ըլլաս: Փայլուն աչքերուդ, ոսկեթել մազերուդ, մանտրաիկ ականջներուդ, կարմրուկ շրթունքներուդ, վերջապէս բոլոր քու անձիդ տէրը ես պիտի ըլլամ, դուն ալ գոհ չես մի զիս առնելնուդ համար, անուշիկ նսնջիկս:

Տօրի — Ինչ ըսել է, շատ գոհ մինչև հիմա հօրս գերի էի, որչափ կը փափաքէի որ զիս տմուսնացներ, որպէս զի ազատիմ իր լուծէն եւ ուզածս ընելու կարող ըլլամ: Փառք Աստուծոյ, աղէկ հանդիպեցար, ասկէ ետքը աղէկ պիտի զբօնում. դուն ալ բարի մարդ մը ես. այն ամուսիններուն պէս չես որ տիկիններնին իրենց համար պահել կ'ուզեն, շիտակը ատիկայ իմ գործիս չգար. առանձնութիւն չեմ սիրեր, կ'ուզեմ որ միշտ անոր ասոր հետ տեսնուիմ, պըտըտիմ զուարճանամ: Կարծեմ թէ դու քալ զիս ձեզի կնութեան առնելնուդ շատ ուրախ պիտի ըլլաք, ամենեւին կռիւ չըլլար մէջերնիս. ես գու գործիդ չեմ խառնուիր, դու ալ իմ գործիս չես խառնուիր, անանկ չէ՞ բայց ինչ եղար, երեսիդ գոյնը նետեց:

Ծեր — Գլխուս մէջ ցու մը մտաւ:
Տօր — Այս օրերս շատերուն կը պատահի ատիկայ, բայց վնաս չունի, երբոր ամուսնանանք՝ ամեն բան կ'անցնի մնաս բարով, տե՛ս, վրաս գլուխս հին է, պիտի երթամ հագուստ գնելու, ցուցակըն ալ քեզի կը զըկեմ, դերձակուհւոյս վճարէ: (մեկնի):

(Շար.)



Հայկական սրճարան եւ ճաշարան, ընթերցարան, պիլարտո, կլիպ եւ ընտիր սիկարներ: Հաստատութիւնս բաց է ամեն օր առաւօտեան ժամը

5էն մինչև 2: Երրորդ Ափսիւ թիւ 388:
 28րդ փողոցին մօտիկ ի Նիւ—Եօրք:

Ներկայ 1900ի մէջ հրատարակուելիք «Վարդանանց պատերազմը կամ Վասակ Սիւնի եւ Վարդան Մամիկոնեան» քննական դործին տպագրութեանը գիւրութիւն մը տուած ըլլալու համար այժմէն բաժանորդագրութիւն մը բացուած է. փափաքողները թող ասձին իրենց հասցէները ու բաժնեգիրը (2 Փր.) զրկել հեղինակին հասցէին:

Արտաշէս Կարապետեան (բօսթ ուէս-թանգ) Հոււլա:

Հրատարակութենէ վերջը սոյն գիրքը պիտի ծախուի 2, 70 սանդիմի:

4—10



ՆԵՐՄԷՍ ԽԱԶԻԿԵԱՆ
 և
 ԼԵՒՈՆ ԱՃԷՄԵԱՆ
 ՈՍԿԵՐԻԶ

Հայոց Եկեղեցիին դիմացը, Վառնա:
 Ոսկերչութեան վերաբերեալ ամեն տեսակ յանձնարարութիւններ կը կատարուին գոհացուցիչ պայմաններով. արծաթի եւ ոսկիի վրայ ծաղկազիր փորագրութիւններ, ինչպէս նաև շատ ձևով մատանիներ, օղեր եւ ապարանջաններ կը պատրաստուին: Ամէն յաճախորդներ արդէն գոհ մնացած են այս երկու վարպետներէն:

Отговорничя М. Сконовъ
 Печальница „Взаимность“ — Варна.